ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մարտի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **04.03.2023թ-ի «Լեռնային Արցախ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-110) 1) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Լեռնային Արցախ ՖԱ»-ի ներկայացուցչի չմասնակցելը, 2) խաղի ժամանակահատվածում տոմսային համակարգի բացակայությունը, 3) երկրպագուների կողմից վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ և անհարգալից արարքներ թույլ տալը, 4) VAR համակարգի գլխավոր էկրանի տեղադրման վայրում հստակ սահմանազատում չլինելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
3) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի երկրպագուների կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
4) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ- ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. 05.03.2023թ-ի «Ալաշկերտ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-106) խաղի ժամանակահատվածում 1) «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի անդամ Բագրատ Նավոյանի անվայել վարքագիծ և ոչ մարզական պահվածք դրսևորելը, 2) դաշտի տեր «Ալաշկերտ» թիմի կողմից խաղադաշտի գծանշումների թերի կատարելը, 3) ՎԻՊ հատվածում ներկաների մոտ անցագրեր չլինելը, 4) VAR համակարգի գլխավոր էկրանի մոտ գծանշում չլինելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի անդամ Բագրատ Նավոյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4) Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝

«Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

3. 06.03.2023թ-ի «Նոա»-«Ուրարտու» (ՊԼ-109) խաղի ժամանակահատվածում 1) դոպինգ ստուգման պայմաններին համապատասխանող սենյակ չտրամադրելը, 2) շտապ օգնության մեքենայի ուշ ժամանելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 58-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Նոա» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 06.03.2023թ-ի «Արարատ»-«Շիրակ» (ՊԼ-107) խաղի ժամանակահատվածում հոսանքի խափանում VAR համակարգի անջատում

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. 04.03.2023թ-ի «Ալաշկերտ 2»-«Արարատ 2» (ԱԽ-112) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Արարատ 2»-ի ներկայացուցչի չմասնակցելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ 2» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. 05.03.2023թ-ի «ԲԿՄԱ 2»-«Միկա» (ԱԽ-110) «ԲԿՄԱ 2»-ի կողմից ֆոտոնկարիչների համար նախատեսված տարբերիչ ժիլետներ չապահովելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 77-րդ կետը՝ «ԲԿՄԱ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

7. 11.03.2023թ-ի «Ուրարտու»-«Լեռնային Արցախ» (ՊԼ-112) խաղի ժամանակահատվածում գնդակ մատակարարող երեխաների սխալ վարքագիծը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. 09.03.2023թ-ի «Արարատ 2»-«Սյունիք» (ԱԽ-118) խաղի երկրորդ խաղակեսի մեկնարկին երկու թիմերի ուշ դուրս գալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

9. 10.03.2023թ-ի «Միկա»-«Գանձասար» (ԱԽ-120) խաղի ժամանակահատվածում մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Միկա ՍԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով: